ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2024 թվականի հունվարի 16-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածի 4-րդ մասը «ծառայության» բառից հետո լրացնել «կամ կամավոր ներկայանալով քրեական վարույթ իրականացնող մարմին՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե է վճարել պարտադիր զինվորական ծառայություն չանցնելու դիմաց օրենքով սահմանված գումարը» բառերով:

~~Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 461-րդ հոդվածով կամ 2003 թվական ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածով նախատեսված արարքը կատարած և դրա համար պատիժ կրող, 27 տարին լրացած անձանց դիմումի հիման վրա դատարանը վերանայում է այդ անձանց նկատմամբ կայացված դատավճիռը և ազատում է նրանց պատժի հետագա կրումից, եթե տվյալ անձինք սահմանված կարգով դիմել են պարտադիր զինվորական ծառայություն անցնելու համար և բժշկական փորձաքննության արդյունքում ճանաչվել են զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ ժամանակավորապես ոչ պիտանի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարել տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ ճանաչվել են զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի և որոնց վրա տարածվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 19-րդ հոդվածով սահմանված հետևյալ կարգավորումները՝

ա. զորակոչվելով պարտադիր զինվորական ծառայության 12 ամիս ժամկետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. զորակոչվելով պարտադիր զինվորական ծառայության 6 ամիս ժամկետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. զորակոչվելով պարտադիր զինվորական ծառայության 1 ամիս ժամկետով և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով ութ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:»: